ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՌՍԴԲԿ III ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

ՌՍԴԲԿ III համագումարը, որը գումարվեց Լոնդոնում, 1905 թ. ապրիլին Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, կարևորագույն ուղենիշ հանդիսացավ կուսակցության կյանքում։ Համագումարը տվեց ռուսական առաջին հեղափոխության բնույթի և շարժիչ ուժերի մարքսիստական-լենինյան բնորոշումը, գինեց կուսակցությանը հեղափոխական-մարքսիստական ստրատեգիական պլանով և տակտիկական գծով, որը լիովին հաստատվեց հեղափոխության հետագա ընթացքով։

Համագումարը մեծ ուշադրություն նվիրեց Անդրկովկասում ծավալվող հեղափոխական շարժումներին և կուսակցական աշխատանքին։ Վճռական ձայնով ներկայացված 21 կոմիտեների թվում էին Կովկասյան Միության (Բաքվի, Բաթումի, Իմերեթո-Մենգրելական) կոմիտեները, որոնց պատգամավորներն էին Միխա Ցխակայան (Բարսով), Ալյոշա Ջափարիձեն (Գոլուբին), Լ. Բ. Կամենևը (Գրադով), Մ. Ն. Լեմանը (Նևսկի) և Ռիբկինը (Լետուչի), որոնք ունեին 8 ձայն՝ հավասար 4 կոմիտեների[1]։

Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ համագումարը բացեց Միխա Ցխակայան, որը կուսակցության հնագույն գործիչներից էր և ՌՍԴԲԿ Կովկասյան միության հիմնադիրներից ու ղեկավարներից։ Նա ակտիվ հեղափոխական աշխատանք էր տարել Կովկասում, Խարկովում և Եկատերինոսլավում, որի համար բազմիցս ենթարկվել էր ցարական իշխանությունների հետապնդումներին։ Կուսակցության II համագումարից հետո վճռականորեն կանգնելով բոլշևիկյան դիրքերում նա դարձել էր Վ. Ի. Լենինի զինակիցը Կովկասում՝ մենշևիկների պառակտիչ գործունեության դեմ մղված պայքարում։

1905 թ. մարտին համագումարի նախապատրաստման կազմակերպական կոմիտեն Ցխակայային, որպես Կովկասյան միության պատգամավորի հրավիրում է Պետերբուրգ, որտեղ նա մասնակցում է կազմակերպական կոմիտեի նիստին։ «Ես իմացա,— գրում է Ցխակայան,— որ Ռուսաստանի կուսակցական կոմիտեների ճնշող մեծամասնությունը դատապարտել է կազմալուծիչ մենշևիկներին, համախմբվել Լենինի շուրջը և արդեն պատգամավորներ ընտրել III համագումարի համար։ Պետերբուրգից մենք պետք է անցնեինք

---

[1] *Ռիֆլիսի մենշևիկները հրաժարվեցին մասնակցել ՌՍԴԲԿ III համագումարի աշխատանքներին։ Այդ մասին նրանք համապատասխան նամակ ուղարկեցին համագումարի նախագահի անունով, որը հրապարակվեց ապրիլի 22-ի առավոտյան նիստում (տե՛ս* Третий съезд РСДРП. Протоколы, М., 1959, стр. 307—310. *Այսուհետև՝* Протоколы). *Կովկասյան մենշևիկները տանելով պառակտիչ քաղաքականություն՝ 1905 թ. ապրիլին ստեղծեցին իրենց առանձին կենտրոնը՝ ՌՍԴԲԿ Կովկասյան բյուրոն։*

արտասահման, Լոնդոն, որտեղ պետք է տեղի ունենար համագումարը։ Շատ պատգամավորներ ստիպված էին մեծ ռիսկի դիմելով գաղտնի անցնել սահմանը։ Վերջին բոպեներն առանց ձերբակալությունների չեղան։

Երբ ես հասա Լոնդոն, այնտեղ էին հավաքվել գրեթե բոլոր պատգամավորները, որոնք ընտրվել էին բոլշևիկյան ընդհատակում»[2]։

Մինչև համագումարի բացումը Ցխակայան մասնակցում է հանձնաժողովների աշխատանքին, մանրամասն ուսումնասիրում հիմնական զեկուցումների նյութերը, կարծիքներ փոխանակում ընկերների հետ՝ տեղական աշխատանքի փորձի մասին։ Շուտով ժնևից պատգամավորների մի խմբի հետ գալիս է Վ. Ի. Լենինը։ Լոնդոնում տեղի է ունենում Վ. Ի. Լենինի և Մ. Ցխակայայի, որոնք մինչ այդ նամակագրական կապ ունեին, առաջին հանդիպումը։ «Լենինի գալուց հետո համագումարն սկսեց իր աշխատանքը,— հիշում է Ցխակայան,— առաջին նիստից առաջ Վլադիմիր Իլյիչն ինձ ասաց, որ ես որպես ավագագույն պատգամավոր պետք է բաց անեմ համագումարը։ Ես փորձեցի առարկել, նշելով, որ համագումարը պետք է բացի միայն Լենինը։

— Հրաժարվել ոչ մի դեպքում չի կարելի ընկեր Միխա,— պատասխանեց Լենինը։

Համագումարի բացումից և իմ բացման ճառից հետո, համագումարը փակ քվեարկությամբ ընտրեց նախագահություն։ Համագումարի նախագահ ընտրվեց Լենինը»[3]։

Իր բացման ճառում Ցխակայան ողջունում է III համագումարը և ցանկանում, որ այն հաղթահարելով բոլոր դժվարությունները, անշեղ, ամուր և եռանդուն կերպով գործի անցնի[4]։

Ցխակայան ակտիվ մասնակցություն է ունենում համագումարի բոլոր նիստերին։ Արձանագրություններում գրանցված է նրա 38 ճառ, դիտողություն, առաջարկություն։ Հատկապես ուշագրավ են նրա ելույթները կազմակերպական կոմիտեի աշխատանքի, զինված ապստամբության, հեղաշրջման նախօրյակին կառավարության քաղաքականության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի, ժամանակավոր հեղափոխական կառավարության, բանվորների և մտավորականների հարաբերությունների, պրոպագանդայի և ագիտացիայի և այլ հարցերի մասին։

Իր բոլոր ելույթներում Ցխակայան հետևողականորեն պաշտպանում է լենինյան դիրքորոշումները։

«Համագումարի ողջ աշխատանքներում,— գրել է հետագայում Մ. Ցխակայան,— զգացվում էր Վլադիմիր Իլյիչի ուղղություն տվող ձեռքը։ Նա համագումարը նախապատրաստել էր երկար և մանրակրկիտ։ Կարևորագույն զեկուցումներն ինքն էր տալիս։ Նա էր նշել հիմնական զեկուցումների թեզիսները, որով համագումարում նրա հանձնարարությամբ հանդես էին գալիս ուրիշները։ Բոլոր կարևորագույն բանաձևերը նույնպես նախապատրաստել էր Վլադիմիր Իլյիչը մինչև համագումարը։

Լենինը մեծ ուշադրությամբ հետևում էր պատգամավորների ելույթներին, արագ բռնում առանձին սխալները, ընդգծում գլխավորն ու վճռականը։ Նա

---

[2] «Правда», 25. IV. 1940.

[3] Նույն տեղում։

[4] Протоколы, стр. 8—9.

հաճախ գեթ մեկ հաջող ռեպլիկայով ուղղում էր անփորձ հռետորին։ Մեզ՝ Ռուսաստանի ընդհատակի աշխատողներիս համար, համագումարը քաղաքական իմաստության և հեղափոխական տակտիկայի հիանալի դպրոց էր»[5]։

Ցխակայան նշում է, որ Վ. Ի. Լենինը մեծ ուշադրությամբ էր հետևում հեղափոխության զարգացմանն Անդրկովկասում։

Կուսակցության Կովկասյան կոմիտեների նկատմամբ Վ. Ի. Լենինի ջերմ հոգատարության վկայություններից էին նաև համագումարի հրավիրման կազմակերպական կոմիտեի վերջին նիստում՝ 1905 թ. ապրիլի 11-ին ընդունված և համագումարի առաջին նիստում հրապարակված Կազմկոմիտեի որոշումների լենինյան նախագծերը՝ առանձին կազմակերպությունների ներկայացուցչության մասին, որոնց մեջ Լենինը պաշտպանում էր Կովկասյան կոմիտեների պատգամավորների լիիրավությունը համագումարում։ «Համագումարում վճռական ձայների թվում,— նշում է Վ. Ի. Լենինը,— անհրաժեշտ է և միակ ճիշտը, հաշվել Կովկասյան պատգամավորների 8 ձայնը, որովհետև դեռևս 1903 թ. աշնանը Կենտկոմը հաստատեց Կովկասյան միութենական կոմիտեի կանոնադրությունը և այդ կանոնադրությամբ Կովկասյան միութենական Կոմիտեին, որպես միութենական կոմիտեի, տրվել է 8 վճռական ձայն համագումարում»[6]։

Հանդես գալով համագումարի ապրիլի 18-ի երեկոյան նիստում ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ սոցիալ-դեմոկրատիայի մասնակցության մասին Վ. Ի. Լենինի զեկուցման պաշտպանությամբ, Մ. Ցխակայան այն համարում էր փայլուն ճառ, որն իրեն ավելի համոզեց, որ այդ հարցադրումը իրենց վզին են փաթաթել նոր իսկրայականները, մենշևիկները։ «...Բոլորովին և ոչ մի բոպե չնսեմացնելով պրոլետարիատի և ամբողջ բուրժուական աշխարհի դասակարգային հակասությունները, մենք հեղափոխության բուն ընթացքով հարկադրված ենք մասնակցել ժամանակավոր հեղափոխական կառավարությանը...»[7]։

Վ. Ի. Լենինի վերոհիշյալ հիմնական քաղաքական զեկուցումից ստացած իր տպավորությունների մասին Ցխակայան հետագայում գրել է. «Լենինը զայրույթով ընդգծում էր մենշևիկյան «Իսկրայի» հոդվածներում եղած օպորտունիստական դրույթները և մենշևիկների փտած, աննշան գաղափարներին հակադրում էր կայուն հետևողական-մարքսիստական դիրքորոշումը։ Նա իր մտքերը հարուստ կերպով պարզաբանում էր միջազգային բանվորական շարժման պատմությունից և հատկապես հեղափոխական 1905 թվականի առաջին ամիսներին Ռուսաստանի բանվորների ընթացիկ պայքարից բերած փաստերով։ Ճառի վերջում ամբողջ համագումարը խոր լռությամբ, ոտքի կանգնած լսում էր նրան, քանի որ հեղափոխության թեորետիկի, տրիբունի և կազմակերպչի երկաթյա տրամաբանությունը դյուրել էր բոլոր պատվիրակներին։

Երբ Իլյիչի զեկուցումն ավարտվեց. ծափահարություններին և օվացիային

---

[5] «Правда», 25.IV. 1940.

[6] В. И. Ленин. Полн. собр. соч.; т. 10, стр. 89. *Կովկասյան միութենական կոմիտեն 1903—1905 թթ. իր գործունեության մասին 1905 թ. ապրիլին զեկուցում էր ներկայացրել ՌՍԴԲԿ III համագումարին* (Протоколы, стр. 606—610).

[7] Протоколы, стр. 205.

վերջ չկար։ Մեր առջև կանգնած էր մեծ հեղափոխականը, թեորետիկը և տրիբունը»[8]։

Նկատի ունենալով Ցխակայայի քաջածանոթ լինելը Կովկասում լայն ծավալվող գյուղացիական շարժմանը, Վ. Ի. Լենինը հանձնարարում է նրան հանդես գալ գյուղացիական շարժմանն աջակցելու վերաբերյալ երկրորդ զեկուցումով։ Առաջին զեկուցողը Վ. Ի. Լենինն էր՝ համագումարի ապրիլի 19-ի երեկոյան նիստում։ «Գյուղացիական շարժմանն աջակցելու հարցը,— ասում է Վ. Ի. Լենինն իր զեկուցման մեջ,— իսկապես բաժանվում է երկու մասի. 1) թեորիական հիմունքներ և 2) կուսակցության պրակտիկ փորձը։ Վերջին հարցին պատասխան կտա երկրորդ զեկուցողը, ընկ. Բարսովը, որը շատ լավ ծանոթ է ամենաառաջավոր գյուղացիական շարժմանը Գուրիայում»[9]։

Ցխակայան իր զեկուցման մեջ հենց սկզբից նշում է, որ Լենինը «փայլուն կերպով ցույց տվեց իրենց համադեմոկրատական պահանջների՝ ընդհուպ մինչև հեղափոխական ճանապարհով մասնավոր սեփականատիրական հողերի բռնագրավման համար մղվող պայքարում գյուղացիությանը ՌՍԴԲԿ-ի եռանդուն օգնություն ցույց տալու ոչ միայն տեսական, այլ առավել պրակտիկ կարևորությունն ու անհրաժեշտությունը»[10]։

Այնուհետև Ցխակայան պատմում է Գուրիայում, Իմերեթիայում և Մենգրելիայում, ինչպես նաև Թիֆլիսի նահանգի Բորչալուի և Գորիի գավառներում գյուղացիության հեղափոխական շարժման աճի և այն հսկայական կազմակերպական ու քաղաքական աշխատանքի մասին, որ տանում էին գյուղացիության մեջ կուսակցության Կովկասյան միությունը, Թիֆլիսի, Իմերեթո-Մենգրելական և Բաթումի կոմիտեները։ Խոսելով գյուղում գրականություն տարածելու գործում Կովկասյան միության հաջող գործունեության մասին Մ. Ցխակայան ընդգծում է Վ. Ի. Լենինի «Գյուղական չքավորությունը» բրոշյուրի թարգմանության և տարածման կարևորությունը[11]։

Համագումարի նույն նիստում ունեցած մեկ այլ ելույթում Մ. Ցխակայան շեշտում է ամբողջ երկրի գյուղացիության մեջ ագիտացիան ու պրոպագանդան ուժեղացնելու անհրաժեշտությունը[12]։ «Ժողովուրդը զինվում է,— գրում է նա,— կործանում է կառավարական հիմնարկները։ Մեր աշխատանքի կենտրոնը՝ քաղաքն է, սակայն չի կարելի մոռանալ գյուղացիներին, որոնք այս կամ այն չափով ազդում են հեղափոխության ընթացքի վրա»[13]։

Համագումարում Ցխակայան և Ջափարիձեն եռանդուն կերպով պաշտպանում են Լենինի դիրքորոշումը սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում բանվորների ու մտավորականների հարաբերությունների մասին։

Ջափարիձեն համագումար եկավ ապրիլի 22-ին, որպես ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի պատգամավոր և իր հետևողական բոլշևիկյան ելույթներով անմիջապես գրավեց Վ. Ի. Լենինի ուշադրությունը։ «Ջափարիձեն շատ դուր եկավ

---

8 Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, մ. 1, Երևան, 1957, էջ 396։
9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 508։
10 Протоколы, стр. 229.
11 Протоколы, стр. 236.
12 Նույն տեղում, էջ 248։
13 Նույն տեղում, էջ 249։

Վլադիմիր Իլյիչին»,— հիշում է III համագումարի պատգամավոր Բ. Ի. Կրամոլնիկովը[14]։

Ջափարիձեն սերտորեն կապված էր Կովկասի և մասնավորապես Բաքվի պրոլետարիատի հետ. 1904 թ. դեկտեմբերին նա ղեկավարել էր Բաքվի նավթարդյունաբերական բանվորների ընդհանուր գործադուլը, որն ավարտվեց Ռուսաստանի պատմության մեջ առաջին անդամ բանվորների և արդյունաբերողների միջև կոլեկտիվ պայմանագրի կնքմամբ։ Այդ մասին Ջափարիձեն գրել էր «Կուսակցության III համագումարում ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի զեկուցման համառոտ կոնսպեկտում», ուր տրվում էր Բաքվի կոմիտեի վերջին մոտ մեկ տարվա գործունեության համառոտ պատկերը[15]։ Այստեղ նշվում էր այն մեծ դերը, որ կատարում էին Բաքվի առաջավոր բանվորները տեղի բոլշևիկյան կազմակերպությունում և հեղափոխական շարժման մեջ։

Բանվորների և մտավորականների փոխհարաբերությունների հարցի քննարկումը համագումարի աշխատանքներում կարևոր տեղ էր գրավում։ Այդ հարցի վերաբերյալ մի քանի անգամ ելույթ է ունենում Վ. Ի. Լենինը։ Ապրիլի 20-ի նիստում արտասանած իր ճառում նա առարկում է նրանց (Ռիկով, Կամենև և ուրիշներ), որոնք գտնում էին, թե վերոհիշյալ հարցի ընդարձակումն անտեղի է։ Լենինը ցույց էր տալիս, որ այն միանգամայն տեղին է։ «Ես կարծում եմ, —ասում է նա համագումարում,— ավելի լայնորեն պետք է նայել գործին։ Բանվորներին կոմիտեների մեջ մտցնելը ոչ միայն մանկավարժական, այլև քաղաքական խնդիր է։ Բանվորները դասակարգային բնազդ ունեն, և քաղաքական մի փոքր ընտելունակություն ունենալով՝ բանվորները բավական շուտ են դառնում տոկուն սոցիալ-դեմոկրատներ։ Ես շատ կհամակրեի այն, որ մեր կոմիտեների կազմում յուրաքանչյուր 2 ինտելիգենտի 8 բանվոր ընկներ»[16]։

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում բանվորների և մտավորականության հարաբերությունների մասին իր ներկայացրած բանաձևի նախագծում Լենինը մերկացնում էր էկոնոմիստների սկսած և մենշևիկների շարունակվող փորձերը՝ թշնամություն և անվստահություն սերմանելու կուսակցության անդամների—բանվորների և մտավորականների միջև, սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին իբրև զուտ մտավորականների կազմակերպություններ պատկերելու փորձերը, որից վարպետորեն օգտվում էին սոցիալ-դեմոկրատների թշնամիները։ Լենինը կրկին հիշեցնում է բանվորական սոցիալ-դեմոկրատական կուսակցության գիտակից անդամների խընդիրը՝ «բոլոր ուժերով ամրապնդել կուսակցության կապը բանվոր դասակարգի մասսայի հետ, պրոլետարիատի և կիսապրոլետարների ավելի ու ավելի լայն խավերին բարձրացնելով—հասցնելով վիճակատար սոցիալ-դեմոկրա-

---

14 О Владимире Ильиче Ленине. Воспоминания 1920—1922 гг., М., 1963, стр. 39.

15 Տե՛ս Պ. Ա. Ջափարիձե, Ընտիր հոդվածներ, ճառեր և նամակներ, 1905—1918 թթ., Երևան, 1970, էջ 17—24 (այսուհետև՝ հոդվածներ...)։

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 517։ Մի քանի ամիս անց՝ 1905 թ. նոյեմբերին իր «Կուսակցության վերակազմության մասին» հոդվածում հիշեցնելով կուսակցության III համագումարում հայտնած իր վերոհիշյալ ցանկության մասին, Լենինն ավելացնում է. «Այժմ պետք է ցանկանալ, որ կուսակցության նոր կազմակերպությունների մեջ կուսակցության սոցիալ-դեմոկրատ մեկ ինտելիգենտ անդամի մի քանի հարյուր բանվոր սոցիալ-դեմոկրատ ընկնի» (Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, էջ 28)։

տական գիտակցության, զարգացնելով նրանց հեղափոխական սոցիալ-դեմոկրատական ինքնագործունեությունը, հոգալով, որ բանվորական մասսան առանձնացնի ըստ կարելույն մեծ թվով բանվորներ, որոնք ընդունակ լինեն ղեկավարելու շարժումը և պրոլետարական կազմակերպություններին, որպես տեղական կենտրոնների և համակուսակցական կենտրոնի անդամներ...»[17]։

Լենինյան դիրքերից մերկացնելով այս հարցում մենշևիկների ընդդիմացումը՝ Ցխակայան իր ելույթում նշում է, որ բանվորների և մտավորականների հարաբերությունների հարցը կենսական է։ «Այն, որ մենք միշտ կանգնած ենք եղել և կանգնած ենք առաջավոր բանվոր սոցիալ-դեմոկրատներին նախապատրաստելու և բանվորական շարժման բոլոր գիտակից առաջնորդներին կոմիտեներին ու այլ կազմակերպություններին մասնակից դարձնելու դիրքում, այդ մենք փաստորեն ապացուցել ենք կոմիտեները կազմակերպելու և համալրելու ժամանակ։

Կոմիտեներում հնարավորին չափ ավելի մեծ թվով բանվորներ ընդգրկելու անհրաժեշտության մասին խոսել է և ընկ. Լենինը իր «Նամակ Պետերբուրգի ընկերոջը» հոդվածում[18]։

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում բանվորների և մտավորականների փոխհարաբերությունների մասին Լենինյան բանաձևի պաշտպանությամբ համագումարում հանդես են գալիս նաև Կովկասյան միության պատգամավորներ Մ. Ն. Լեմանը և Պ. Ա. Ջափարիձեն։ Ջափարիձեի և Դ. Ս. Պոստոլովսկու (Միխաիլով, Վադիմ, Ալեքսանդրով)[19] ելույթներն այդ մասին Վ. Ի. Լենինը համարում էր վերին աստիճանի արժեքավոր[20]։

«Զարմանում եմ,— գրում է Ջափարիձեն,— երբ ասում են, թե չկան կոմիտեական լինելու ընդունակ բանվորներ։ Ընդհակառակն (Լենին, լսեցեք, լսեցեք), նրանք այնքան շատ են, որ բոլորին կոմիտեում ընդգրկելու հնարավորություն չկա, և ստիպված ենք լինում նրանց մտցնել շրջանային կոմիտեների մեջ...»[21]։

Կովկասյան կոմիտեներն այդ տեսակետից օրինակ էին ցույց տալիս և Կովկասյան միութենական կոմիտեի, և Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի, Իմերեթո-Մենգրելական կոմիտեների կազմում միշտ եղել են առաջավոր բանվորներ։ III համագումարն արձանագրում է, որ այն ժամանակ Բաթումի կոմիտեի կազմում 4 բանվոր կար[22]։

Ջափարիձեն համագումարում լենինյան դիրքերից ճառերով հանդես է գալիս նաև ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների նկատմամբ վերաբերմունքի, կուսակցության անջատված մասի վերաբերյալ

---

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 519։

18 Протоколы, стр. 257—258. Ցխակայան այստեղ նկատի ունի Վ. Ի. Լենինի «Նամակ ընկերոջը մեր կազմակերպական խնդիրների մասին»-ը, որը գրված է 1902 թ. սեպտեմբերին և բազմիցս հրատարակվել է (տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 285—312)։

19 Պոստոլովսկին III համագումարում ՌՍԴԲԿ հյուսիս-արևմտյան կոմիտեի պատգամավորն էր. մինչև այդ նա աշխատել էր Թիֆլիսում և Կովկասյան միութենական կոմիտեի անդամ էր։ III համագումարում Պոստոլովսկին ընտրվում է ՌՍԴԲԿ Կենտկոմի անդամ։

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 520։

21 Պ. Ա. Ջափարիձե, Հոդվածներ... էջ 25։

22 Протоколы, стр. 344.

բանաձևի քննարկման, էսէռների հետ համաձայնության, ինչպես նաև պրոպագանդայի և ագիտացիայի հարցերի առթիվ։

Ելնելով հեղափոխության շահերից և նկատի ունենալով զինված ապըստամբության մոտիկությունը, Վ. Ի. Լենինը հնարավոր էր համարում բոլոր հեղափոխական ուժերի համախմբումը, սոցիալ-դեմոկրատիայի միավորումը և ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միաձուլումը ՌՍԴԲԿ հետ։ Նա հնարավոր էր համարում նաև ժամանակավոր մարտական համաձայնություններն էսէռների կազմակերպության հետ՝ պայմանով, որ այդպիսի համաձայնությունները չսահմանափակեն սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության լիակատար ինքնուրույնությունը և խախտեն նրա պրոլետարական տակտիկայի ու սկզբունքների ամբողջականությունը, մաքրությունը։ Ըստ որում՝ այդ պետք է իրականացվեր Կենտկոմի վերահսկողությամբ[23]։

Ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների նկատմամբ վերաբերմունքի հարցը քննարկվում է ապրիլի 23-ին, համագումարի 21-րդ նիստում՝ Վ. Ի. Լենինի նախագահությամբ։ Այդ հարցի մասին Վ. Վ. Վորովսկու (Օրլովսկի) կողմից բանաձևի նախագիծը հրապարակելուց հետո, ելույթ է ունենում Ջափարիձեն։ Նա նշում է, որ ազգային կազմակերպությունները տարբեր են լինում. «Օրինակ Կովկասում կան «դրոշակյանների»[24] և «Սաքարթվելո»[25] կուսակցությունները։ Այլ բան է «հնչակյանների» կուսակցությունը, որն ընդունել է մեր ծրագիրը և իր աշխատանքը համաձայնեցնում է մեր հետ։ «Սաքարթվելոականները» օգտվելով Կովկասում տիրող ընդհանուր վրդովմունքից և հեղափոխական տրամադրություններից, ասպարեզ են գալիս և ջանում իրենց ձեռքը վերցնել գյուղացիական շարժումը։ Նրանց դեմ պետք է պայքարել, իսկ համաձայնության մասին, համենայն դեպս առայժմ, խոսք անգամ լինել չի կարող։ Իսկ «Հնչակյանների հետ մենք համաձայնություններ ունեցել ենք և այսուհետև էլ անհրաժեշտ է նրանց հետ համաձայնությունների մեջ մտնել»[26]։

Ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի մասին բանաձևում համագումարը հանձնարարում էր «Ինչպես Կենտկոմին, այնպես էլ տեղական կոմիտեներին՝ բոլոր ջանքերը գործադրել համաձայնության գալու ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ, նպատակ ունենալով համաձայնեցնելու տեղական աշխատանքը և այդպիսով նախապատրաստելու բոլոր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները մի միասնական ՌՍԴԲԿ մեջ միավորելու հնարավորությունը»[27]։

Կուսակցության անջատված մասի վերաբերյալ բանաձևի քննարկման առ-

---

23 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 532—533։

24 Դրոշակյաններ— «Դաշնակցություն» կուսակցության օրգան «Դրոշակ» թերթի անունով։

25 Վրացական նացիոնալիստների խումբը, որոնք համախմբվել էին 1903—1905 թթ. Փարիզում վրացերեն և ֆրանսերեն հրատարակվող «Սաքարթվելո» թերթի շուրջը։ Դա 1904 թ. ապրիլին մնում ձևավորվում է որպես սոցիալ-ֆեդերալիստների բուրժուա-նացիոնալիստական կուսակցության կորիզ։

26 Պ. Ա. Ջափարիձե, Հոդվածներ..., էջ 25—26։

27 ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, մաս 1, էջ 101։

թիվ արտասանած ճառում Ջափարիձեն կոնկրետ փաստերով մերկացնելով այսպես կոչված «Բալախանիի և Բիբի-Հեյբաթի բանվորների կազմակերպության» մենշևիկյան, կուսակցության համար վարկաբեկիչ աշխատանքը Բաքվում, միաժամանակ, կուսակցության միավորման կոչ է անում և առաջարկում է այն ուղղել բոլոր կազմակերպություններին[28]։

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության համախմբման ու ամրապնդման և հեղափոխության զարգացման շահերից էին բխում Ջափարիձեի,, Լեմանի և Ցխակայայի ելույթները էսէռների հետ համաձայնության հարցը քննարկելիս։ Նրանք նշում են, որ Կովկասում էսէռները չափազանց թույլ են և հատկապես աննշան են նրանց կապերը բանվորների հետ. այդ պատճառով էլ նրանց չի կարելի ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ հավասար դասել։ «Էսէռների հետ պետք է ավելի զգուշորեն մտնել համաձայնության մեջ, որովհետև նրանք մեծ ռեկլամողներ են և ամեն մի չնչին դեպք օգտագործում են աղմկոտ հայտարարությունների համար»[29]։

Լեմանն իր ելույթում ցույց է տալիս էսէռների կուսակցության կենտրոնական օրգան «Ռևոլյուցիոննայա Ռասիա» թերթի և նրան ձայնակցող մենշևիկյան «Իսկրայի» զրպարտությունները Կովկասյան միութենական կոմիտեի հասցեին, որոնք չարախնդությամբ գրում էին, որ, իբր, կոմիտեն համաձայնությունների մեջ է մտել էսէռների հետ։ Ցխակայան իր ճառում ասում է, որ Կովկասյան միութենական կոմիտեն «ոչ միայն համաձայնության մեջ չի եղել էսէռների կամ այլ կուսակցությունների հետ, այլ նրանց հնարանքները օգտագործել է իր նպատակների համար, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի հեղինակությունը ուժեղացնելու համար»[30]։

Էսէռների հետ համաձայնության վերաբերյալ ցույց տալով Կովկասի առանձնահատկությունները, Կովկասյան միության պատգամավորները այդ հարցում միաժամանակ քվեարկում են համագումարի բանաձևի օգտին, գտնելով, որ հեղափոխության պահին պետք է օգտվել նաև էսէռների ծառայություններից[31]։

Ապրիլի 25-ին, համագումարի 22-րդ նիստում, դարձյալ Վ. Ի. Լենինի նախագահությամբ, քննարկվում է պրոպագանդայի և ագիտացիայի հարցը։ Ջափարիձեն և Ցխակայան այդ մասին արտասանած իրենց ճառերում սրում են պրոպագանդային և ագիտացիային ավելի մեծ ուշադրություն դարձնելու, այդ ուղղությամբ Կովկասին ցույց տրվող օգնությունն ուժեղացնելու հարցը։ «...Հարկավոր է թաթարական լեզվով գրականություն,— ասում է Ջափարիձեն,— դժբախտաբար, ստիպված ենք արձանագրել գյուղացիության համար գրականության բացակայությունը, գյուղացիության համար ռուսաց լեզվով միայն մեկ բրոշյուր կա՝ ընկ. Լենինի բրոշյուրը։ Այդ ուղղությամբ Կովկասյան միությունը շատ բան է արել. բաց են թողնված պատկառելի քանակությամբ թռուցիկներ, բրոշյուրներ....»[32]։

---

28 Տե՛ս Պ. Ա. Ջափարիձե, Հոդվածներ..., էջ 26—28.
29 Նույն տեղում, էջ 28։
30 Протоколы, стр. 388.
31 Նույն տեղում, էջ 387։
32 Պ. Ա. Ջափարիձե, Հոդվածներ..., էջ 29։

Ցխակայան առաջարկում է ընդլայնել հանրամատչելի բրոշյուրների հրատարակության գործը։ Այդ տեսակետից քննադատելով 1901—1902 թթ. Շվեյցարիայում հրատարակվող «Սվոբոդա» հանդեսի շուրջը համախմբված խմբի հրատարակած բրոշյուրների գռեհիկ պարզունակությունը[33],— Ցխակայան նշում է,— որ անհրաժեշտ է հանձնարարել ընկ. Լենինին գրելու հանրամատչելի բրոշյուրներ[34]։

Լինելով դիտական մտածող Վ. Ի. Լենինը միաժամանակ բանվորական ու գյուղացիական մասսաների համար հանրամատչելի բրոշյուրներ գրելու հիանալի օրինակ էր ցույց տալիս։ Նրա «Գյուղական չքավորությանը» բրոշյուրը 1903 թ. մայիսից մինչև 1905 թ. դեկտեմբերն արդեն տարածվել էր Ռուսաստանի ավելի քան 73 բնակավայրերում։ Կովկասյան միութենական կոմիտեն այն վերահրատարակել էր իր ընդհատակյա տպարանում, իսկ 1905 թ.՝ նաև թարգմանաբար։ III համագումարը բարձր գնահատեց Կովկասյան միութենական կոմիտեի պրոպագանդիստական և հրատարակչական գործունեությունը։

Այդ ժամանակ առանձնապես լարված ու արդյունավետ էր գործում դեռևս 1903 թ. Կովկասյան միութենական կոմիտեի ստեղծած Հավլաբարի անլեգալ տպարանը, որը սերտ կապեր ուներ Լենինի հետ։ Այստեղ են տպագրվել կուսակցության առաջնորդի «Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան», «Գյուղական չքավորության մասին» բրոշյուրները, II համագումարում ընդունված ՌՍԴԲԿ ծրագիրը, ՌՍԴԲԿ կանոնագրությունը՝ ընդունված ՌՍԴԲԿ III համագումարում, հազարավոր օրինակներով թռուցիկներ և կոչեր (ռուսերեն, վրացերեն և հայերեն), «Պրոլետարիատի կռիվը», «Պրոլետարիատի կռվի թերթիկը» և այլն։ Տպարանի հրատարակությունները ուղարկվում էին Լենինին և բոլշևիկյան կենտրոնին[35]։

Համագումարի նախավերջին՝ 25-րդ նիստում՝ ապրիլի 26-ի երեկոյան քննարկվում են Ցխակայայի և Լենինի բանաձևերը Կովկասյան իրադարձությունների մասին։ Առաջին բանաձևի բնագիրը ստորագրել էին Ցխակայան, Ջափարիձեն և Ռիբկինը։ Երկրորդ բանաձևը, որը գրել էր Լենինը, մտցվում է Լենինի ու Ցխակայայի անունից[36]։ Քննարկման ընթացքում առաջին բանաձևը մերժվում է երկար լինելու և երկրորդ բանաձևի հիմնական մտքերը կրկնելու պատճառով։ Ընդունվում է Վ. Ի. Լենինի գրած բանաձևի նախագիծը, որի վերջում ասված էր. «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության III համագումարը Ռուսաստանի գիտակից պրոլետարիատի անունից ջերմագին ողջույն է հղում Կովկասի հերոսական պրոլետարիատին և գյուղացիությանը և կուսակցության Կենտկոմին ու տեղական կոմիտեներին հանձնարարում է ամենաեռանդուն միջոցներ ձեռք առնել՝ Կովկասի գործերի դրության մասին ամենալայն կերպով տեղեկություններ տարածելու բրոշյուրների, միտինգների, բանվորական ժողովների, խմբակային զրույցների և այլ

---

33 Վ. Ի. Լենինը քննադատելով «Սվոբոդա» հանդեսը գրել է. «սա հանրամատչելիություն չէ, այլ վատ տոնի հանրամատչելիության փորձ», Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 412։

34 Протоколы, стр. 398.

35 См. Авлабарская нелегальная типография Кавказского союзного комитета РСДРП (1903—1906). Сборник материалов и документов, Тбилиси, 1954.

36 Протоколы, стр. 729.

միջոցներով, ինչպես նաև ժամանակին աջակցություն ցույց տալու Կովկասին զինված ուժով»[37]։

Բանաձևի նախագծի «զինված ուժով» բառերը փոխարինվում են «Իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով» բառերով, որի հետ Լենինը համաձայնվում է[38], միաժամանակ նշելով, որ այն «զուրկ է հեղափոխական կոչից»[39]։

Բանաձևի քննարկման ժամանակ առարկելով Ա. Ի. Ռիկովին (Սերգեև), որը դեմ էր արտահայտվում Կովկասին զինված ուժով օգնություն ցույց տալու Լենինյան ձևակերպմանը և այդ մասին Ցխակայայի առաջարկություններն համարում էր սոցիալ-դեմոկրատիայի կողմից Անդրկովկասի բանվորների և գյուղացիների արյունոտ սպանդի հրահրում, Օդեսայի պատգամավոր Ն. Ա. Սկրիպնիկը (Շչենսկի) հայտարարում է. «Մենք պետք է եռանդուն աշխատենք, որպեսզի զինված ուժով պաշտպանենք Անդրկովկասի ապստամբ ընկերներին։ Մենք պետք է ռուս բանվորներին զինված ապստամբության կոչենք։ Մենք պետք է, ես կասեի, հրահրենք, այսինքն ռուսաստանյան բանվոր դասակարգին հեղափոխության մղենք։ Եվ մենք, միաժամանակ, բանվորներին զենք տանք, որպեսզի նրանք այդ ապստամբության ժամանակ հաղթեն»[40]։

Լենինյան ոգով արտահայտվելով Կովկասի իրադարձությունների մասին համագումարը դրանով իսկ բարոյական մեծ օգնություն էր ցույց տալիս Անդրկովկասի բանվորներին ու գյուղացիներին, որոնք անձնվեր պայքար էին մղում ինքնակալության դեմ՝ օրինակ ծառայելով ողջ երկրի համար։ Համագումարի արձանագրությունների քարտուղարական նախնական գրանցումներում նշված էին Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հնգույն գործիչ, համագումարում կուսակցության խորհրդի և ՌՍԴԲԿ Կենտկոմի պատգամավոր Լ. Բ. Կրասինի (Զինին) հետևյալ խոսքերը. «Բազմաթիվ օրինակներ պատկերում են Կովկասի հեղափոխական վառ տրամադրությունները։ Եվ մեզ համար երբեք չի կարող անտարբեր լինել, խոստանում ենք մենք օգնություն Կովկասին, թե ոչ։ Անհաջողության դեպքում Կովկասյան պրոլետարիատն ինքը մեզ չի հանդիմանի։ Պրոլետարիատի և գյուղացիության ամենալայն խավերի կողմից այդ պարբերությունը կդիտվի հենց որպես կոչ»[41]։

Կովկասի գիտակից պրոլետարիատը միշտ էլ հսկայական նշանակություն էր տալիս Ռուսաստանի բարոյական օգնությանը և իր շարժումը դիտում որպես համառուսաստանյան բանվորական, հեղափոխական շարժման անբաժան մասը, հենց դրա մեջ էլ տեսնելով իր հաղթանակի գրավականը։ «Կովկասում սկսված հեղափոխական շարժումը,— ասում է Ցխակայան համագումարում,— պետք է համադասվի Ռուսաստանում հեղափոխական շարժման հետ»[42]։

Կուսակցության III համագումարում Կովկասյան պատգամավորները, մասնավորապես Ցխակայան ու Ջափարիձեն Լենինի ղեկավարությամբ անցան

---

37 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 536—537։
38 Протоколы, стр. 442—443.
39 Նույն տեղում, էջ 443։
40 Նույն տեղում, էջ 444։
41 Նույն տեղում։
42 Տե՛ս նույն տեղում, էջ 443։

բաղաքական հասունության մեծ դպրոց։ Լենինի հետ նրանց անձնական ծանոթությունը, իրենց նկատմամբ կուսակցության առաջնորդի ջերմ հոգատարությունը Անդրկովկասի պրոլետարիատի այդ ճանաչված ղեկավարներին ոգեշնչում էր նոր գործերի, նրանց հաղորդում հեղափոխական նոր եռանդ։

Համագումարն ավարտելուց հետո Վ. Ի. Լենինը պատգամավորների հետ այցելում է Լոնդոնի և Փարիզի հիշարժան վայրերը՝ Մարքսի գերեզմանը, «Կոմունարների պատը»՝ Պեր-Լաշեզի գերեզմանոցում և այլն։ Այդ մասին Ցխակայան հետագայում գրել է. «Ես երբեք չեմ մոռանա, թե ինչպես Լոնդոնից մեկնելուց առաջ Իլյիչը մեզ տարավ դիտելու կենդանաբանական այգին, Բրիտանական պատմական թանգարանը։ Նույն բանն արեց նա նաև Փարիզում. ինձ ցույց տվեց էյֆելյան աշտարակը, համաշխարհային նկարչության թանգարանը՝ Լուվրը, և կոմունարների պատը՝ Պեր-Լաշեզ գերեզմանատանը։ Ինքն այդ ամենը բազմիցս տեսել էր և գալիս էր հատկապես ինձ ցույց տալու նպատակով։

Մենք Լոնդոնում տեսանք նաև Կարլ Մարքսի գերեզմանը»[43]։

Ամբողջ կուսակցության հետ միասին Լենինի ղեկավարությամբ Կովկասի դիտակից բանվորներն ու նրանց ղեկավար բոլշևիկները՝ Մ. Ցխակայան, Ս. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Ի. Ստալինը, Մ. Ազիզբեկովը, Պ. Մոնտինը, Ա. Բեկզադյանը և ուրիշներ վճռական պայքար ծավալեցին համագումարի որոշումների կենսագործման համար։

БОЛЬШЕВИКИ ЗАКАВКАЗЬЯ НА III СЪЕЗДЕ РСДРП

Г. Б. ГАРИБДЖАНЯН
Академик АН Арм. ССР

Резюме

В статье на основе литературных источников и архивных материалов показывается участие делегатов от партийных организаций Закавказья на III съезде РСДРП (апрель 1905), их встречи с В. И. Лениным.

Делегаты Закавказских организаций РСДРП на III съезде имели 8 решающих голосов (из 46). Среди них были М. Г. Цхакая, П. А. Джапаридзе, М. Н. Леман. Съезд по поручению Ленина открыл старейший член партии М. Цхакая.

Многие документы съезда говорят о большом внимании Ленина к кавказским большевистским организациям, к растущему на Кавказе революционному движению. Съезд высоко оценил пропагандистскую и издательскую работу Кавказского краевого комитета, принял резолюцию Ленина «По поводу событий на Кавказе». При ее обсуждении Ленин выступал дважды.

Делегаты съезда от большевиков Закавказья активно поддержали линию Ленина по всем вопросам революции. Решения съезда были обсуждены и одобрены на партийных собраниях и конференциях в Баку, Тифлисе, Эривани, Кутаиси, Елизаветполе, Александрополе, Батуми, Шуше, Ахпате, Хони и других местах Закавказья.

43 Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, մ. 1, էջ 397։